ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԳՈՒՄԱՐՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 90 ՐՈՊԵ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 62-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է**.

Ազգային ժողովի ութերորդ գումարման երկրորդ նստաշրջանի 2021 թվականի հոկտեմբերի 26-ին գումարվող հերթական նիստերի ընթացքում ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-009-18.08.2021,21.10.2021-ՊԻ-011/0) օրենքի նախագծի, ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի (Կ-034-17.09.2021,25.10.2021-ՏՏԳՇ-011/0), ««Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի (Պ-020-10.09.2021,22.10.2021-ԳԿ-011/0) և ««Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» օրենքում փոփոխություններ լրացումներ կատարելու մասին» (Կ-032-17.09.2021,22.10.2021-ՏՀ-011/0) օրենքի նախագծի քննարկման տևողությունները սահմանել մինչև 90 րոպե:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Ռ. ՌՈՒԲԻՆՅԱՆ**

2021 թվական, հոկտեմբերի 25
Երևան
ԱԺԽՈ-021-Լ